ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10/19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Բյուրեղավան 16 դեկտեմբերի 2019թ.

2019 թվականի դեկտեմբերի 16-ին, ժամը 15:00-ին Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան բնակավայրում՝ Բյուրեղավանի համայնքապետարանի թիվ 1 վարչական շենքում, տեղի ունեցավ համայնքի ավագանու որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման նպատակով ստեղծված ֆինանսական, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական գործող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստ՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքում տեղական վճարների 2020 թվականի տեսակները, դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին», «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2020 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին», «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավարի վարձատրության չափը որոշելու մասին», «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի 2020 թվականի կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին», «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի համայնքային ենթակայության կազմակերպությունների 2020 թվականի աշխատողների քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին», «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» որոշումների նախագծերի թեմաներով:

Նիստին մասնակցում էին Հանձնաժողովի նախագահ Արման Օհանյանը, անդամներ Արման Խանզադյանը, Արտյոմ Ավագյանը, համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Լիդիա Պողոսյանը, աշխատակազմի գլխավոր մասնագետ, զարգացման պատասխանատու Սարգիս Ղազարյանը, Հանձնաժողովի աշխատանքներին աջակցող համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Զարուհի Ապրեսյանը:

Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց նիստի օրակարգը՝

1. «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքում տեղական վճարների 2020 թվականի տեսակները, դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին»,
2. «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2020 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին»,
3. «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավարի վարձատրության չափը որոշելու մասին»,
4. «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի 2020 թվականի կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին»,
5. «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի համայնքային ենթակայության կազմակերպությունների 2020 թվականի աշխատողների քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին»,
6. «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելուս մասին»,

համայքնի ավագանու որոշումների նախագծերի քննարկում:

«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքում տեղական վճարների 2020 թվականի տեսակները, դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին» հարցի շուրջ Լ.Պողոսյանը ներկայացրեց, որ համաձայն «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի՝ տեղական վճարը տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների շրջանակներում համայնքի կամ համայնքի պատվերով մատուցած ծառայությունների համար համայնքի բյուջե կամ բյուջեի բաղկացուցիչ մաս կազմող, օրենքի համաձայն բացված արտաբյուջետային միջոցների հաշվին վճարվող, սույն օրենքի դրույթների հիման վրա ավագանու սահմանած պարտադիր գանձույթ է: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետին և «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 8-րդ, 10-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածներին համապատասխան՝ տեղական տուրքերը համայնքի ղեկավարի ներկայացմամբ սահմանում է համայնքի ավագանին՝ համայնքի տարեկան բյուջեն հաստատելուց առաջ, ինչպես նաև օրենքի 16-րդ հոդվածով սահմանվում են տեղական վճարների արտոնություններ: Լ. Պողոսյանը ներկայացրեց, որ 2020 թվականի համար նախատեսված է Բյուրեղավանի քաղաքային համայնքի «Մարզամշակութային կենտրոն» բյուջետային հիմնարկի ծառայությունից (շախմատի ուսուցում)

օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափ՝ մեկ սովորողի համար՝ 2000 (երկու հազար) դրամ սահմանել:

Որոշվեց՝

հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքում տեղական վճարների 2020 թվականի տեսակները, դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ, զարգացման պատասխանատու Սարգիս Ղազարյանը ներկայացրեց հաջորդ՝ ***«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին»*** նախագիծը: Բյուրեղավան համայնքի 2020 թվականի տարեկան աշխատանքային պլանը (այսուհետ՝ ՏԱՊ) այն գործիքն է, որը թույլ է տալիս հիմնավորված, փաստարկված (արդյունքային ցուցանիշների միջոցով) կերպով գնահատել ՏԻՄ-երի և համայնքում գործող այլ կազմակերպությունների կողմից իրականացված ծրագրերի արդյունավետությունը մեկ տարվա ընթացքում՝ հիմք ստեղծելով համայնքի զարգացման հնգամյա ծրագրի ճշգրտման և հաջորդ տարիների պլանավորման և բյուջետավարման համար:

Բյուրեղավան համայնքի ՏԱՊ-ը մշակվել է հետևյալ հիմնական նպատակներով՝

Բյուրեղավան համայնքի ՏԱՊ-ը մշակվել է հետևյալ հիմնական նպատակներով՝

- համակարգել ՏԻՄ-երի տվյալ տարվա անելիքները,
- սահմանել սոցիալ-տնտեսական զարգացման առաջնահերթությունները, գնահատել համայնքի ներքին ռեսուրսները, հաշվառել համայնքում ներդրվող արտաքին ռեսուրսները, հաշվարկել համախառն ռեսուրսները և բացահայտել պակասուրդը (դեֆիցիտը),
- համախմբել համայնքում տվյալ տարվա համար նախատեսվող բոլոր ծրագրերը և միջոցառումները ՀՀԶԾ-ով սահմանված՝ համայնքի տեսլականի և հիմնական նպատակների իրականացման շուրջ,
- շաղկապել նախատեսվող ծրագրերը և միջոցառումները դրանց իրականացման արդյունքների հետ՝ կիրառելով ՀՀԶԾ-ի ոլորտային ծրագրի «Տրամաբանական հենքը»,
- որոշակիացնել նախատեսվող ծրագրերի և միջոցառումների իրականացման ֆինանսական աղբյուրները և միջոցները, պատասխանատուները և ժամկետները, մշակել տվյալ տարվա ՏԱՊ-ի իրականացման ՄԳՊ-ը:

Բյուրեղավան համայնքի 2020թ. տարեկան աշխատանքային պլանը բաղկացած է 5 բաժիններից.

1-ին բաժնում սահմանվում է համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները:

2-րդ բաժնում ներկայացվում է համայնքի 2020 թվականի ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը (ըստ ոլորտների):

3-րդ բաժնում ներկայացվում է համայնքային գույքի կառավարման 2020 թվականի ծրագիրը:

4-րդ բաժնում ներկայացվում է համայնքի ՏԱՊ-ի ֆինանսավորման պլանը:

5-րդ բաժնում ներկայացվում է համայնքի ՏԱՊ-ի մոնիթորինգի և գնահատման պլանը:

Համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները - Բյուրեղավան համայնքը բարեկարգ, մաքուր, կանաչապատ և բնակչության կեցության համար արժանապատիվ պայմաններով բազմաբնակավայր համայնք է: 2020 թվականի համար նախատեսվում է համայնքային ծառայությունների թափանցիկ կառավարում, ենթակառուցվածքների գործունեության պահպանում: Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության ոլորտում նախատեսվում է Ջրաբեր բնակավայրի խմելու ջրագծի և ներքին ցանցի կառուցման աշխատանքներ, համայնքի արտաքին լուսավորության արդիականացման աշխատանքներ, ինչպես նաև ներհամայնքային ճանապարհների բարեկարգման և հիմնանորոգման աշխատանքներ:

Կրթության ոլորտում նախատեսվում է Բյուրեղավան համայնքի նախադպրոցական և արտադպրոցական կրթության ծառայությունների մատուցում, ինչպես նաև մշակութային, մարզական և հոգևոր կյանքի աշխուժացում:

Առողջապահության ոլորտում նախատեսվում է «Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկայ» ՓԲԸ-ի շենքի և բակի հիմնանորոգման աշխատանքներ:

Գյուղատնտեսության ոլորտում Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի հետ համատեղ իրականացվում են աշխատանքներ համայնքում ոռոգման համակարգերի հիմնանորոգման և վերակառուցման հետ կապված:

Շրջակա միջավայրի պահպանության բնագավառում համայնքի տարածքում նախատեսվում է աղբահանության, սանիտարական մաքրման, կանաչապատման աշխատանքների իրականացում:

Որոշվեց՝

հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավարի վարձատրության չափը որոշելու մասին» նախագծի վերաբերյալ Լ. Պողոսյանը ներկայացրեց, որ համայնքի ղեկավարի վարձատրության չափը որոշում է համայնքի ավագանին՝ համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 28-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետերի:

Որոշվեց՝

հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավարի վարձատրության չափը որոշելու մասին որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի 2020 թվականի կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» որոշման վերաբերյալ Լ. Պողոսյանը ներկայացրեց, որ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ և 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ ավագանին է հաստատում համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը:

Որոշվեց՝

հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի 2020 թվականի կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի համայնքային ենթակայության կազմակերպությունների 2020 թվականի աշխատողների քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» նախագծի շուրջ Լ. Պողոսյանը ներկայացրեց, որ համայնքի ղեկավարի ներկայացմամբ ավագանին է հաստատում նաև համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայությամբ կազմակերպությունների աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ և 35-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի:

Որոշվեց՝

հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի համայնքային ենթակայության կազմակերպությունների 2020 թվականի աշխատողների քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» որոշման վերաբերյալ Լիդիա Պողոսյանը ներկայացրեց, որ Բյուրեղավան համայնքի 2020 թվականի բյուջեի նախագծում եկամուտների և ծախսերի ընդհանուր գումարը ծրագրվել է 349 975.7 հազար դրամ, դեֆիցիտը՝ 0 դրամ:

Բյուջեն պլանավորված է նպաստելու համար համայնքի համաչափ և կայուն զարգացմանը, բարեկարգ, հարմարավետ և մատչելի միջավայրի ձևավորման շարունակականության ապահովմանը, համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների արդիականացմանը, բնակչության կենսական շահերի ապահովմանը: Բյուջեի եկամուտների տեսակներից է նաև այլ եկամուտներ, որի մեջ ներառվում են հողի վարձակալությունից վճարներ՝ 7250.3 հազար դրամ, որի մեծ բաժինը կազմում են Ձրաբեր բնակավայրում առկա հանքավայրերի կողմից վճարված գումարները: Արվեստի դպրոցի վճարներից նախատեսվել է 9378.0 հազար դրամ, մանկապարտեզի վճարներից՝ 13392.0 հազար դրամ, աղբահանության վճար՝ 20112.0 հազար դրամ: 2020 թվականի համար նոր տեղական վճար է սահմանված՝ Ձրաբեր գյուղի խմելու ջրի համար, որից եկամուտ նախատեսված է 2160.0 հազար դրամ: Ինքնակամ շինությունների օրինականացումից եկամուտ՝ 3000.0 հազար դրամ, օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված այլ եկամուտների գծով եկամուտ՝ 2300.0 հազար դրամ:

Լ. Պողոսյանը նշեց, որ հիմք ընդունելով եկամուտների մասը, կազմվել է նաև բյուջեի ծախսերը:

Բյուջեի ծախսերի կանխատեսում

Բյուրեղավան համայնքի 2020 թվականի բյուջեի նախագծով ծախսերի ծավալը ծրագրվել է 349 975.7 հազար դրամի չափով: Ծախսերի ամբողջ ծավալի շուրջ 100.0 %-ը կամ 349 975.7 հազար դրամը բաժին է ընկնում ընթացիկ ծախսերին (վարչական բյուջե), 10 000 հազար դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերին (ֆոնդային բյուջե), իսկ ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի գումարը կազմում է 10 000.0 հազար դրամ, դիֆիցիտը՝ 0 դրամ:

Բյուջեի նախագծով առաջարկվող բյուջետային ծախսերում 25.7 %-ը կամ 98 250.0 հազար դրամը բաժին է ընկել «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» ոլորտին, 0.1 %-ը կամ 400.0 հազար դրամը՝ «Պաշտպանություն» և «Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն» ոլորտներին, 0.3 %-ը կամ 1 150.0 հազար դրամը՝ «Տնտեսական հարաբերություններ» ոլորտին, 21.0 %-ը կամ 75000.0 հազար դրամը՝ «Շրջակա միջավայրի պաշտպանություն» ոլորտին, 3.1 %-ը կամ 11000.0 հազար դրամը՝ «Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն» ոլորտին, 0.6 %-ը կամ 2 000.0 հազար դրամը՝ «Առողջապահություն» ոլորտին, 7.1 %-ը կամ 25.320.0 հազար դրամը՝ «Հանգիստ, մշակույթ և կրոն» ոլորտին, 23.9 %-ը կամ 85 360.4 հազար դրամը՝ «Կրթություն» ոլորտին, 1.4 %-ը կամ5 140.0 հազար դրամը՝ «Սոցիալական պաշտպանություն» ոլորտին, 18.2 %-ը կամ 65 045.9 հազար դրամը՝ «Հիմնական բաժիներին

չդասվող պահուստային ֆոնդեր» ոլորտին: Պահուստային ֆոնդը նախատեսվել է վարչական բյուջեի եկամուտների 18.6 %-ի չափով:

Որոշվեց՝

հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Նիստն ավարտվեց:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Արման Օհանյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Արման Խանզադյան

_____ Արտյոմ Ավագյան